ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«01» 12 2023 թ.
№ ՊԱՇՊ-ԳԿԴ-1676

«Իմմունոֆարմ» ՍՊԸ (ՀՎՀՀ 02835316)
ք. Երևան, Հ.Ներսիսյան 10-3/1
հեռ.010-23-08-40
էլ. փոստի հասցե՝ tender@immunofarm.net

ՀՀ պաշտպանության նախարարության և «Իմմունոֆարմ» ՍՊ ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) միջև 24.05.2023թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-23-9/15-4 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ընկերությունը 2023թ. 4-րդ եռամսյակում պետք է մատակարարեր 2 լրակազմ՝ Խլամիդիա IgA:

ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալին ներկայացրած գրության համաձայն Ընկերությունը հրաժարվում է կնքված պայմանագրի շրջանակներում 39-րդ չափաբաժնով նախատեսված 2 լրակազմ **Խլամիդիա IgA** ապրանքատեսակի 1 լրակազմի մատակարարումից:

Հիմք ընդունելով վերոգրյալը ՀՀ պաշտպանության նախարարությունը **2023թ. դեկտեմբերի 1-ին** միակողմանի **մասնակի** լուծել է Պայմանագիրը չմատակարարված 1 լրակազմ Խլամիդիա IgA ապրանքատեսակի մասով:

Տեղեկացնում ենք, որ «Իմմունոֆարմ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005028106** հաշվեհամարին փոխանցել **500** ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.3 կետի համաձայն), տույժը հաշվարկված է մինչև **21.11.2023թ.**:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է **14,850** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005000758** հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է **4455** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900008000664** հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև **2023թ. դեկտեմբերի 8-ը** ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված **14,850** ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 4455 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «Իմմունոֆարմ» ՍՊ ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև **2023թ. դեկտեմբերի 8-ը** ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2076 սենյակ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ